

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Անուն, ազգանուն՝

Հերթում Համամճյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության հատուկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2018 թվականի հունիսի 24-26-ը:

4. Հրավիրող կողմը՝

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության քարտուղարություն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ՀԱՊԿ ֆինանսատնտեսական գործունեությունը կանոնակարգող որոշ փաստաթղթերի նախագծերի քննարկման նպատակով ս.թ. հունիսի 25-26-ը Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվայում անցկացվող ՀԱՊԿ անդամ-պետությունների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների փորձագետների խորհրդատվություններին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները՝

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 2019 թվականի բյուջեի մասին» և «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 2017 թվականի բյուջեի կատարման հաշվետվության մասին» ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի որոշումների նախագծեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀԱՊԿ քարտուղարությունում ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Սեմերիկովի նախագահությամբ անցկացված խորհրդատվությունների ժամանակ տեղի են ունեցել Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի Հանրապետությունների, Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև ՀԱՊԿ քարտուղարության և ՀԱՊԿ միացյալ շտաբի փորձագետների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ՀԱՊԿ գործունեությունը կանոնակարգվող վերը նշված փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև

